



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ՝ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱ-
ՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌԵԽԴ. ԻԸ. ՏԱՐԻ.

ՋԱՄԱԲ Ե Բ Ե Բ Ո Բ Գ

ՓԵՏՐՈՒԱՐ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ս. ՂԵՒՈՆԴԻԵԱՆՑ ՅԵՇԱՏԱԿԻՆ.



« Եւ լուայ զբարբառ Տեանս,
որ ասէր. Ձճ առաքեցից եւ
կամ ո՛վ երթիցէ առ այն
ժողովուրդ : »

Նսայի Զ. 8:

Նցեալի յիշատակը կեն-
դանի հետաքրքրու-
թեան մի անսպառ աղ-
բիւր է սրտի և դաղա-
փարի տէր մարդոց հա-
մար. ամեն ոք կարող է
այդտեղ իւր հերոսը
որոնել, անձնաւորու-

թիւններ և ամբողջ պատմական շրջաններ գրո-
նել, որոնք կեանքի կատարելատիպը վառ գոյ-

ներով նորա աչքի առաջ նկարուած են, նորան
ողևորումս վսեմ խորհուրդներ են ներշնչում՝
մի բարձրագոյն նպատակի ձգտել զրդումս Մե-
կին գրաւում են պատերազմի դաշտում վաս-
տակած դափնիները, միւսին հանձարեղ մտքի
արդիւնքները, երրորդին գեղարուեստի հրա-
շալիքը. ոչ միայն անհատական տրամադրու-
թեանս այլ նաև ժամանակի պայմանների հա-
մեմատ փոփոխուում է անցեալի գործած տը-
պաւորութիւնը. երբեմն այս հերոսը կամ դէպ-
քըն է աւելի աչքի ընկնում աւելի խորհր-
դաւոր նշանակութիւն ստանում, երբեմն այն
միւսը:

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑՆՅԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ լաւ պար-
զելու համար պետք է ի նկատի ունենալ մեր
ժողովրդի ներկայ ժամանակի զլխաւոր պա-

հանջը. հարցրէք՝ ի՞նչ է որոնում հայ հասարակութիւնը մեր աշխարհի ամեն մի անկիւնում. նաև դուրսը ամենուրեք, ուր հայ անունով հայի հաւատով ապրելու ձգտումը կայ. մարդ, մարդ... մի մարդ, որ տարբերուէր միւս սովորական մարդկանցից, գլխով չափ բարձր կանգնած այս գաջաջ սերունդից՝ անմատչելի լինէր այն տղմին և ապականութեան, որի մէջ թաղուած են ուրիշները, մի քահանայ, որ Բարձրեալի Աթոռի առաջ կանգնելու համարձակութիւն ունենար, ժողովրդի վիշտն ու պաղատանքը դէտր այնտեղ, միութարութիւն բերէր, կենդանի խօսքով վառէր ու մաքրէր սրտերը, դէպի վեր, դէպի բարին ուղղէր մաքերը:

Եւ ահա, երբ մեր հայեացքը ականայից դէպի անցեալն է դառնում, գալիս՝ կանգնում է մութ հորիզոնի վերայ Անանդի Նրէցը իւր անմահ ընկերակիցների լուսադէմ խմբով մէկ տեղ: Մա ինձ պատկերանում է ոչ այնպէս, ինչպէս պատկերացել է երբեմն բանաստեղծի երևակայութեան առաջ՝ երկնային ճնաշխարհի մի երևոյթ, վերև օդի մէջ, այլ իբրև մի հասարակ մարդ ամուր հողի վերայ կանգնած, մի պարզ գիւղական քահանայ խաչն ու աւետարանը ձեռքին, մի տէրտէր այժմեր այս... մեր այս ժրժ. դարու լուսաւոր սերունդի համար յանչափս արհամարհելի տէրտէր անունը կրող մի խեղճ մարդ, որի լեզուից սակայն մեզի իման քաղցր խօսք, ծորում, որի հոգու պայծառութիւնը իւր պատկառելի դէմքի վերայ է արտափայլում: անօրէն բռնակալներին անգամ պատկառանք ազդում, որի հետ ինքը Տէր Աստուածը խօսել է, իւր սուրբ կամքի թարգման և վկայ կարգել: *

Ի՞նչ կլինէր Աւոնդ երէցը, եթէ կրօնական պատերազմները առիթ չտային նորան պատմութեան հրապարակի վերայ ելնելու: Ժամանակակից պատմիչները վկայում են, որ նա իւր դարու ամենազիտուն և հանճարեղ

անձինքներից մէկն էր. բայց երբ նա զիւղ զընաց պաշտօն վարելու անշուշտ երբեք մտքից չէր անցնում, որ մի օր մեծահոգի անուն պիտի ունենար, չէր մտածում թէ ո՞վ այնտեղ գիւղում իւր զիտութեան և հանճարի վերայ պիտի զարմանար, իւր արժանիքը գնահատէր: Մարդոց չէր ծառայում նա և ուրախ պիտի լինէր, եթէ մի օր Ամենակալ Տիրոջ ներկայանալով ասել կարողանար. «Ծառայք անպիտանք էաք, զոր ինչ պարան էաք առնել՝ արարաք»: Եւ այսպէս կմեռնէր նա. ծանօթները՝ զուցէ մի ամբողջ զաւառի բնակիչներ, առ ժամանակ սիրով և յարգանքով կյիշէին նորա անունը, և հետզհետէ մոռացութեան կտային... նա ինքը այս մասին չէր հոգացել, բայց նախաՆամութիւնը այլ կերպ էր տնօրինել:

Ինչի՞ նման կլինէր, կհարցնենք, Յ. դարը, եթէ Հայոց գիւղերում Աւոնդ երէցի պէս քահանաներ չգտնուէին: Այդ դարը պատմութեան այն շրջաններից է, երբ մարդոց ամբարշտութեան և թշուառութեան բաժակը լեցում է, դատաստան է պէտք, երկրաւոր ուժերով անկման և կորստեան առաջն առնել կարելի չէ այլ ևս. բայց ահա բարձրից որոտում է Զօրութեանց Տէրը, անորոշ մի գող և սարսուռ է պատում մարդոց, միայն մարդարէի սրտեսութեան և սուր ականջ ունեցողներն են, որ Մորա մերձակայութիւնը զգում են և բացականչում. «վայ է ինձ՝ ես այր տառապեալ զիմորգ կամս, հիացեալ զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես»: Սակայն Մա ուղարկում է իւր սրովբէին երկնային հրոյ կայծակը մօտեցնելու ընտրեալի շրթունքին, և երբ գալիս է վերևից վճռական հարցը. «Զ՞ո՞ առաքեցից կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ», անօրէնութիւններից ազատուած և մեղքերից մաքրուած Աստուծոյ մարդը հանդէս գալ և համարձակ ասել կարող է «Ահաւասիկ ես, առաքեալ զիս»:

Այսպիսի մէկն էր իւր ժամանակի համար Նսայի մարդարէն: Երբ նա Տիրոջից կոչումն ընդունեց, զիս բարգաւաճ դրութեան մէջ էր

* Համ. Ղազարայ Փարսեցոյ պատմութիւն Հայոց. Ղճնտիկ 1873. էջ. 205 եւ 228:

իւր հայրենիքը, կանգուն թէ Զուգայի և թէ Խսրայէլի թագաւորութիւնը, բայց նա բաց աչքով տեսնում էր գալիք աղէտները, Սամարիայի կործանումը, Զուգայի ռանակոխ լինելը թշնամիներից՝ այն ամեն շարիքը որ այս ապերասան ժողովուրդը իւր անօրէնութիւնների երեսից պիտի կրէր, և վշտից զարարուում էին նորա աղիքները, երբ նա հարցնում էր. «Մինչև յերջ Տէրը, Սակայն անհրաժեշտութեան առաջ պէտք էր խոնարհել, այս ամենը պիտի գար, անօրէնութիւնները պէտք է պատժուէին, որպէս զի արդար և հնազանդ մի մնացորդ ետ մնար, և մարգարէն հաւատարիմ մնաց իւր կոչման, Իբրև մի խարազան Ամենակալի ձեռքին հարուածեց Սա մարդկանց անիրաւութիւնները, իւր ժողովրդի անողորմ դատաւորը եղաւ, երբ նա բաղդից կուրացած շաւյլութեան և անօրէնութեանց անձնատուր էր եղել, նորա խորհրդատուն և մտիթարիչը՝ երբ նեղութեան ու տառապանքի օրերը հասան, Ամբողջ արեւելքը Ասորեստանցւոց ոտքի տակ սասանում էր, մէկը միւսի ետևից ընկնում, հիմնայատակ կործանում էին քաղաքներ և թագաւորութիւններ, միայն Երուսաղեմն էր մնացել թշնամիներից պաշարուած, սպառել էին պաշտպանութեան բոլոր միջոցները, ոչ ոքի մտքից անցնել չէր կարող, թէ նորա փրկութեան հնարը կայ, թագաւոր և ժողովուրդը մարգարէի ոտքն ընկած՝ Տիրոջ օգնութիւնն էր հայցում, և Տէրը հասաւ օգնութեան. «Ճանապարհ ընդ որ եկն, ընդ նոյն դարձցի և ի քաղաքն այն մի մտցէ».*

Հրամայեց մարգարէն և Ասորեստանցին ստիպուած էր իսկոյն յետ նահանջել, այն աներևոյթ ձեռքը՝ որ նորան մինչև այստեղ էր բերել, կրկին յետ տարաւ նորան։

Այսպէս է եղել ահա Աստուծոյ մարդը ամեն ժամանակ, Այսպէս էր Եսայի մարգարէից առաջ Եղիա Թեգրացին, այսպէս էին նորանից յետոյ բոլոր մարգարէները. այսպէս էր Մակարայեցւոց նախահայրը Մատթէի քահանան, որ Տիրոջ սեղանի պղծութիւնը տեսնել չկարողացաւ, լերիկամունք իւր զղողանի հարան

և լի եղև սրամտութեամբ բարկութեամբ ըստ օրինաց դատաստանին, զոտս արձակեաց՝ հար զՀրէայն և անդէն սատակեաց առաջի բաղնին», և այսպիսով կրթեց, յառաջ բերաւ մի սերունդ, որ Երուսաղէմը պիտի պահէր և աշխարհի Սրիչին սնուցանէր իւր զրկում։ Այսպիսի նախանձախնդրութեամբ լեցուած ինքը, Տէրը քշեց վաճառականներին տաճարից, նոյնպիսի նախանձախնդրութեամբ Տիրոջ պաշտօնեաները՝ ս. Ղևոնդեանը, Զարդեցին կրակապաշտ մոզերի կառավները, պահեցին Նոր Սիոնը պղծութիւնից, պահեցին անկուսից և կորուստից Նոր Սիոնի ժողովուրդը, Եւ այնուհետև ամեն անգամ երբ մարդոց ամբարշտութիւնը ծայրայեղութեան է հասել, երբ Աստուծոյ տաճարը վտանգի մէջ է եղել և երկնքից կախուել է այդ հարցը. «Զ՞ առաքեցից և կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ», միշտ զանուել է մէկը որ այդ ձայնը լսէր, որի շրթունքին սրովբէական կայծակը զիպած լինէր և որ հանդէս գար ասելով. «Ահաւասիկ ես, առաքեա՞ զիս»։

Միթէ մեր ժամանակն էլ այդ ժամանակներից չէ. միթէ լսելի չէ և այսօր Սիոնի Տիրոջ որոտալը վերևից, և ո՞վ է, որ նորա մերձակայութիւնը զգում է և չէ սարսում. «վայ է ինձ՝ ես այր տառապեալ զիմորդ կամս, հիացեալ զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովուրդեան բընակեալ եմ ես»։ Սարից սար, ձորից ձոր անցնում է և ս. ձագանգ տալիս է Առջոյի ձայնը. «Զ՞ առաքեցից, զ՞ առաքեցից», երբ անպէտք է պատասխան զանէ այդ հարցը, երբ պէտք է երկնային հուրը մերձենայ և մեր շրթունքին հասնէ, մեր անօրէնութիւնները, սրբէ մեր մեղքերը, որպէս զի մարդիկ զտնուէին՝ ս. Ղևոնդեանց ժառանգ, մարգարէական հոգւով լի քահանաներ հանդէս գային, որ համարձակէին ասել. «Ահաւասիկ ես, առաքեա՞ զիս».*

Կ. Ա.

* Սոյն հիմաստով Խոսեւցաւ ս. Ղևոնդեանց տօնին Գեորգեան Ճեմարանում։

* Եսայի ԼԷ, 34: